ՐԱՖՖԻ

Հողագործին

Դե՛, դու ժիր մշակ, լծե՛ քո արոր,
Հասավ գործելու քեզ փառավոր օր,
Ժա՛մ է քեզ հիմա արտը մշակել,
Բարեբեր սերմանց պտուղ ճաշակել:

Անցավ ձմեռը դառնաշունչ, խոնավ,
Բքաբեր մրրիկ չէ փչում բնավ.
Գարնան տաք օրեր, անուշիկ, պայծառ,
Ուրախ ճռվռով ավետե ծիծառ:

Սոխակը յուր վարդին տա նախկին բարև,
Քաղցր ժպտելով ծագում է արև,
Անաղոտ լուսով երկնից դիցուհին,
Փայլում է շողեր Հայոց աշխարհին:

Յուր անուշ հոտով բուրե մանիշակ,
Ի՛նչ հրճվանք այժմ քեզ գործի, մշակ.
Դե՛, լծե՛, դու քո արոր և գութան,
Ցանել պտղավետ սերմունք գիտության:

Հայոց կոշտացած, անմշակ դաշտում,
Վարե՛ քո արտը ուրախ, անտրտում,
Խոր ակոս ձգե հողում արգավանդ,
Պատառե՛ նորա կուսական արգանդ:

Եվ արշալույսի ցողաբեր պահուն,
Երբ օրհնի աստված թռչունքը անհուն,
Երբ ծագե յուր լույս երկնքեն ֆերոս,
Եվ ծաղկունք խնկեն բուրմունք և ամբրոս:

Հնչեցո՛ւր, մշակ, անուշիկ քո երգ,
Եվ առա՛ջ վարե օրավար քո հերկ,
Քո ժիր, գործունյա եզներիդ ուժեղ
Կըտա զորություն մեր աստված ամեն:

Ցանե՛, դու մշակ, բարեբեր սերմունք.
Օրհնե՛ քո տեր հունձիդ արդյունք.
Կըգա քեզ ամառ, ջերմին եղանակ,
Կըհասնի ցանքը քո այն ժամանակ: